

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԷՖԵՍ» ապահովագրական փակ բաժնետիրական  
ընկերության միակ հիմնադրի

14/04/2023թ. թիվ 14042023-01 որոշմամբ

Փոփոխված է «ԷՖԵՍ» ԱՓԲԸ բաժնետերերի  
ընդհանուր ժողովի 26/04/2024թ. թիվ 2024-03  
որոշմամբ

Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախագահ՝  
Ջորջիո Կալլեգարի



(ստորագրություն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝  
Մարտին Գալստյան

(ստորագրություն)

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

«ԷՖԵՍ» ապահովագրական  
փակ բաժնետիրական ընկերության

(նոր խմբագրություն)

## ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԷՖԵՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը և ընդունվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ԷՖԵՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն) առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող և սույն կանոնադրության 17 կետով սահմանված թվով բաժնետոմսերի:
2. Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է՝  
**«ԷՖԵՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն,**  
**“ЭФЕС” Страховое Закрытое Акционерное Общество,**  
**EFES Insurance Closed Joint Stock Company:**  
Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝  
**«ԷՖԵՍ» ԱՓԲԸ,**  
**“ЭФЕС” СЗАО,**  
**EFES ICJSC:**
3. Ընկերության գտնվելու վայրի հասցեն է՝ **Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արաբկիր, Հրաչյա Քոչար փողոց 35/1:**
4. Ընկերությունն իրավաբանական անձ է, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է ունենալ իր անվանմամբ կլոր կնիք՝ հայերեն և անգլերեն և(կամ) ռուսերեն լեզուներով, դրոշմեր, ձևաթղթեր և այլ կնիքներ: Ընկերությունը կարող է ունենալ օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային և սպասարկման նշաններ: Ընկերությունն իր անունից կնքում է պայմանագրեր, ձեռք է բերում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում է պարտավորություններ, կարող է հանդես գալ դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող: Ընկերությունն իր գործունեությանը համապատասխան իրականացնում է իր գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը: Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:
5. Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել որպես իրավաբանական անձ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) Ընկերության՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Ընկերությունը գործում է առանց գործունեության ժամկետի սահմանափակման:
6. Ընկերությունն իրավունք ունի իրականացնել ապահովագրական գործունեություն և օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված գործառնություններ Կենտրոնական բանկի կողմից ապահովագրական գործունեություն իրականացնելու

- լիցենզիա ստանալու պահից:
7. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դրամական և արժեթղթերի հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում կամ դեպոզիտարիաներում:
  8. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար: Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը: Ընկերության բաժնետերերի միջև հարաբերությունները կարող են կարգավորվել նաև բաժնետերերի միջև կնքված համաձայնագրով:
  9. Ընկերության միակ բաժնետերն է հանդիսանում «Ինթելիջենթ Մենեջմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Աջափնյակ, Վահագնի թաղամաս, Գանձասարի փ., 17, գրանցված 22.11.2022թ., գրանցման թիվ 271.110.1277977, ՀՎՀՀ՝ 01330894):

## **II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԱՏԵՐԸ, ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ)**

10. Ընկերությունը (ներառյալ՝ իր մասնաճյուղերի միջոցով) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել ապահովագրության հետևյալ տեսակները.  
ա) **ոչ կյանքի ապահովագրություն.**  
բ) **վերաապահովագրություն:**
11. Ընկերությունը (ներառյալ՝ իր մասնաճյուղերի միջոցով) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել ոչ կյանքի ապահովագրություն՝ հետևյալ դասերով.
  - 1) **դժբախտ պատահարներից ապահովագրություն,**
  - 2) **առողջության ապահովագրություն,**
  - 3) **ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային),**
  - 4) **օդանավերի ապահովագրություն,**
  - 5) **փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն,**
  - 6) **հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն,**
  - 7) **գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն,**
  - 8) **ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,**
  - 9) **օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,**
  - 10) **ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն (պատասխանատվության բոլոր այն տեսակները, որոնք ներառված չեն «Ապահովագրության և**

**ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-12-րդ կետերով նախատեսված դասերում),**

- 11) երաշխիքի տրամադրում,
- 12) ֆինանսական վնասների ապահովագրություն,
- 13) աջակցության ապահովագրություն, որը ծածկում է ճանապարհորդության մեջ կամ իրենց մշտական բնակության վայրից հեռու գտնվող անձանց աջակցության տրամադրումը:

12. Ընկերությունը (ներառյալ՝ իր մասնաճյուղերի միջոցով) «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է իրականացնել վերաապահովագրություն՝ «**ոչ կյանքի վերաապահովագրություն**» դասով:
13. Ընկերությունը, դրա մասնաճյուղերն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող են իրականացնել ապահովագրական գործունեությունից բխող կամ դրա հետ ուղղակիորեն կապված հետևյալ գործառնությունները՝
  - 1) ներդնել և կառավարել Ընկերության միջոցները օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով թույլատրված ակտիվներում և սահմանափակելով.
  - 2) իրականացնել իր, ինչպես նաև օրենքով սահմանված այլ անձանց ակտիվների և պարտավորությունների կառավարումը.
  - 3) իրականացնել ածանցյալ ֆինանսական գործիքներով գործառնությունները, եթե դրանք օգտագործվում են ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարման ռիսկերը ծածկելու համար՝ կապված փոխարժեքի, տոկոսադրույքների փոփոխությունից բխող և այլ ռիսկերի հետ.
  - 4) գնահատել ապահովագրական ռիսկերը.
  - 5) ստանձնել և օտարել սուբռոգացիայի արդյունքում ապահովագրողի սեփականությանն անցած գույքը և այլ իրավունքները.
  - 6) բացահայտել ապահովագրական պատահարի առաջացման պայմանները և պատճառները.
  - 7) գնահատել ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած վնասների և ապահովագրական հատուցման և ապահովագրության պայմանագրից բխող այլ վճարումների չափը.
  - 8) գնահատել ապահովագրության օբյեկտի արժեքը.
  - 9) իրականացնել միջոցառումներ՝ ուղղված ապահովագրական պատահարների կանխարգելմանը, դրանց արդյունքում հնարավոր վնասների նվազեցմանը, այդ միջոցառումները ֆինանսավորելու նպատակով ձևավորել միջոցներ.
  - 10) ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում ապահովագրության պայմանագրով նախատեսված լինելու դեպքում ստուգել ապահովագրված նյութական արժեքների պահպանման վիճակը և թերությունների հայտնաբերման դեպքում պահանջել դրանց վերացումը՝ սահմանելով հիմնավոր ժամկետներ.
  - 11) ստեղծել և սպասարկել հաճախորդների վերաբերյալ տեղեկատվական համակարգ,
  - 12) իրականացնել օրենքով կամ Կենտրոնական բանկի որոշումներով թույլատրված այլ գործունեություն (գործարքներ, գործառնություններ):
14. Ընկերությունը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն

անհրաժեշտ կամ նպատակահարմար է իր՝ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով թույլատրված գործունեությունն իրականացնելու համար: Ընկերությունը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային, բանկային ու վարկային կազմակերպության գործունեություն, եթե «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:

15. Այն դեպքում, երբ Ընկերության ծայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի քանակը չի գերազանցում 10-ը, Ընկերության գործարքներում շահագրգռվածության վերաբերյալ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի IX գլխի նորմերի պահանջները Ընկերության կողմից մասնակի կամ ամբողջությամբ կարող են չկիրառվել:
16. **Ընկերության գործառնություններն իրականացվում են բացառապես անկանխիկ ձևով:**

### III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ԴՐԱ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

17. Ընկերության կանոնադրական կապիտալը **2,500,000,000 (երկու միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ** է: Այն բաղկացած է 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) հատ տեղաբաշխված հասարակ անվանական բաժնետոմսերից, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ: Ընկերության բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և ձեռք են բերվել ընկերության բաժնետերերի կողմից:
18. Ընկերության հայտարարված հասարակ անվանական բաժնետոմսերի քանակը կազմում է 100,000,000,000 (մեկ հարյուր միլիարդ) հատ բաժնետոմս:
19. Ընկերության հայտարարված արտոնյալ բաժնետոմսերի քանակը կազմում է 100,000,000,000 (մեկ հարյուր միլիարդ) հատ բաժնետոմս, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը 1,000 (մեկ հազար) ՀՀ դրամ է:
20. Ընկերությունը կարող է ավելացնել իր կանոնադրական կապիտալի մեծությունը, որի մասին որոշումն ընդունվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:
21. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ: Ընդ որում, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին միայն կանոնադրության 18 և 19 կետերում սահմանված հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում: Հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը և պայմանները սահմանվում են այդ բաժնետոմսերի թողարկման մասին որոշմամբ: Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:
22. Ընկերության բաժնետերերն ունեն կանոնադրական կապիտալում իրենց բաժնին համապատասխան նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք: Այդ իրավունքի իրականացման ժամկետը՝ բաժնետոմսերի տեղաբաշխումն սկսելու օրվանից հաշված, չի կարող 30 օրից պակաս լինել:

#### IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

23. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր: Ընկերության կողմից թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը (այդ թվում՝ արտոնյալ) ու պարտատոմսերը անվանական են և ոչ փաստաթղթային ձևի, եթե թողարկման մասին որոշմամբ այլ ձև չի նախատեսվում: Ընկերության կողմից թողարկված միևնույն տեսակի և դասի բաժնետոմսերի անվանական արժեքները պետք է լինեն միևնույնը: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը ոչ փաստաթղթային ձևի են:
24. Ընկերությունը՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, իրավունք ունի տեղաբաշխել մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր, այդ թվում՝ հաստատագրված և (կամ) փոփոխական շահութաբաժնով (անկախ Ընկերության տնտեսական գործունեության արդյունքից), փոխարկելի, մարվող և այլ տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության կողմից տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի գումարային անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի ընդհանուր ծավալի 25 տոկոսը:
25. Ընկերությունը կարող է թողարկել հաստատագրված շահութաբաժնով, փոփոխական շահութաբաժնով, կումուլյատիվ, ոչ կումուլյատիվ, մարվող, հետ գնման իրավունքով, փոխարկելի, ոչ փոխարկելի մի քանի դասի արտոնյալ բաժնետոմսեր: Յուրաքանչյուր դասով ամրագրված իրավունքները սահմանվում են այդպիսի արտոնյալ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմաններով, որը հաստատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ: Ընկերության կողմից տեղաբաշխված հաստատագրված շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերն իրավունք են տալիս դրանց սեփականատերերին ստանալ հաստատագրված շահութաբաժին՝ բաժնետոմսերի անվանական արժեքից որոշված տոկոսներով: Ընկերության կողմից տեղաբաշխված փոփոխական շահութաբաժնով արտոնյալ բաժնետոմսերի շահութաբաժնի չափը հաշվարկվում է ելնելով որևէ գործոնից (այդ թվում՝ ՀՀ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույք, գնաճ և այլն): Տվյալ դասի բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման պայմանները, շահութաբաժնի չափը, մարման գինը, հետգնման պայմանները, լուծարային արժեքը սահմանվում են այդպիսի արտոնյալ բաժնետոմսերի թողարկման և տեղաբաշխման պայմաններով սահմանված կարգով: Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով՝ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից:
26. Արտոնյալ բաժնետոմսերն իրավունք են տալիս իրենց սեփականատերերին ձայնի իրավունքով մասնակցելու Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներին, եթե քննարկվում են Ընկերության լուծարման կամ վերակազմակերպման հարցեր, ինչպես նաև սույն կանոնադրության 27 կետով սահմանված դեպքում:
27. Որոշակի տեսակի (դասի) արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում ձեռք են բերում ձայնի իրավունք, եթե քննարկվում են կանոնադրության փոփոխման կամ լրացման հետ կապված այն որոշումները, որոնք սահմանափակում են այդ դասերի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունքները, ներառյալ՝ այլ դասերի արտոնյալ բաժնետոմսերի դիմաց վճարվող

շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի սահմանումը կամ ավելացումը, ինչպես նաև այլ դասի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին շահութաբաժինների և (կամ) լուծարային արժեքի վճարման հերթականության արտոնությունների տրամադրումը:

28. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից որոշված կարգով կարող է աշխատակիցներին տրամադրվել ինչպես սովորական, այնպես էլ արտոնյալ (դրանց առկայության դեպքում) բաժնետոմսեր: Աշխատակցի բաժնետոմսերի սեփականատերերը, օգտվում են նույն իրավունքներից, ինչպիսիք սահմանված են օրենքով և Ընկերության կանոնադրությամբ դրանց համապատասխանող հասարակ կամ տարբեր տեսակների արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի համար:
29. Ընկերության բաժնետոմսերի (այդ թվում՝ արտոնյալ) տեղաբաշխման դեպքում դրանց դիմաց վճարման միջոց կարող են լինել դրամական միջոցները (<< դրամը), եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Ընկերության այլ արժեթղթերի դիմաց վճարման միջոց կարող են լինել ցանկացած գույքը, ներառյալ՝ գույքային իրավունքները, արժեթղթերը, մտավոր սեփականությունը, դրամական միջոցները: Ընկերության արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, դրանց ձեռքբերման ժամանակ վճարվում են լրիվ արժեքով:
30. Ընկերությունն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումն իրականացվում է Ընկերության խորհրդի որոշմամբ, որով և պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները: Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Պարտատոմսերը չեն կարող թողարկվել մինչև Ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը: Ընկերությունը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Ընկերության կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերի մարումն իրականացվում է դրամով կամ այլ գույքով՝ պարտատոմսերի թողարկման մասին որոշման համաձայն: Ընկերությունը կարող է թողարկել՝
  - 1) Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր.
  - 2) երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր.
  - 3) առանց ապահովման պարտատոմսեր:

## **Վ. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

31. Ընկերության բաժնետերերն ունեն Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Եթե որևէ բաժնետեր ցանկանում է վաճառել (վաճառքի առաջարկ անել, վաճառքի կամ գնելու առաջարկ անելուն հրավիրել կամ անհատույց հատկացնել) իրեն սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերը, ապա նա այդ մասին ծանուցում է Ընկերությանը՝ համապատասխան գրություն ուղարկելով Ընկերության գործադիր տնօրենի անունով: Գրությունը պետք է պարունակի վաճառվող բաժնետոմսերի քանակի, գնի և վաճառքի այլ էական պայմանների մասին տվյալներ: Գրությունը ստանալու պահից երկու օրվա ընթացքում գործադիր տնօրենը՝ այդ գրությունը կամ դրա ամբողջական տեքստը ներառող ծանուցումը պատվիրված

- Նամակով ուղարկում է կամ համապատասխան ստորագրությամբ առձեռն հանձնում է Ընկերության մյուս բաժնետերերին: Ծանուցումն ուղարկվում է բաժնետոմսերի ռեեստրում նշված բաժնետիրոջ փոստային հասցեով: Պատվիրված նամակի ուղարկման կամ առձեռն հանձնման ամսաթիվը համարվում է բաժնետոմսերի վաճառքի առաջարկման օր:
32. Եթե բաժնետերերը համաձայնվում են ձեռք բերել առաջարկվող բաժնետոմսերը, ապա դրանք բաշխվում են՝
- 1) բաժնետոմսերի գնման հայտերով որոշվող համամասնությամբ, եթե այդ հայտերում նշված բաժնետոմսերի գումարային քանակը չի գերազանցում առաջարկվող բաժնետոմսերի գումարային քանակին,
  - 2) բաժնետոմսերի գնման հայտեր ներկայացրած բաժնետերերի միջև՝ նրանց կողմից ձեռք բերված համաձայնության շրջանակներում որոշված համամասնությամբ, կամ
  - 3) բաժնետերերի միջև համամասնորեն, ըստ՝ կանոնադրական կապիտալում իրենց մասնակցության տեսակարար կշռի:
33. Այն դեպքում, երբ բաժնետոմսերը համամասնորեն բաշխելիս յուրաքանչյուր բաժնետիրոջը բաժին է ընկնում ոչ ամբողջական թվով (կոտորակային) բաժնետոմսեր, Ընկերության ժողովը որոշում է ընդունում բաժնետոմսերի անվանական արժեքի փոփոխման մասին, այնպես, որ յուրաքանչյուր բաժնետիրոջը բաժին ընկնի ամբողջական թվով բաժնետոմսեր:
34. Եթե բաժնետերերը գործադիր տնօրենի կողմից ծանուցումն ուղարկելու կամ առձեռն հանձնելու պահից սկսած 30 կամ բաժնետիրոջ կողմից ծանուցումը գործադիր տնօրենին ուղարկելու պահից սկսած 32 օրվա ընթացքում իրենց նախապատվության իրավունքից օգտվելու մտադրության մասին գրավոր ծանուցում չեն ուղարկում Ընկերությանը, կամ ուղարկում են նախապատվության իրավունքից օգտվելուց հրաժարվելու գրավոր ծանուցում, ապա գործադիր տնօրենը պարտավոր է պահանջել, իսկ Ընկերության խորհրդի նախագահը՝ հրավիրել Ընկերության խորհրդի նիստ, որի օրակարգում ընդգրկվում է Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ հրաժարվելու հարցը: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում, բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձանց:
35. Բաժնետերն իրավունք ունի վաճառքի առաջարկված բաժնետոմսերը վաճառել Ընկերության այն բաժնետերերին, ովքեր մինչև սույն կանոնադրության 34 կետով սահմանված ժամկետի ավարտը ներկայացրել են բաժնետոմսերի գնման հայտ, եթե միաժամանակ առկա է նաև Ընկերության այլ բաժնետերերի կողմից իրենց նախապատվության իրավունքի հրաժարման մասին գրավոր հայտարարություն ուղղված Ընկերության գործադիր տնօրենին կամ վաճառող բաժնետիրոջը: Առաջարկ ներկայացրած բաժնետերը գնման հայտի կամ հայտերի առկայության դեպքում, չի կարող միակողմանիորեն հետ կանչել իր առաջարկը, բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 452-րդ հոդվածով սահմանված դեպքերի:
36. Եթե սույն կանոնադրության 34 կետով սահմանված ժամկետի ավարտից հետո ոչ մի բաժնետեր չի ներկայացրել գնման հայտ կամ Ընկերությունը որոշում է կայացրել չգնել առաջարկվող բաժնետոմսերը, ապա բաժնետերն իրավունք ունի վաճառքի առաջարկված բաժնետոմսերը վաճառել երրորդ անձի: Բաժնետերը չի կարող բաժնետոմսերը վաճառել երրորդ անձանց ավելի ցածր գնով և այլ նպաստավոր պայմաններով, քան առաջարկվել է մյուս բաժնետերերին և Ընկերությանը:
37. Սույն կանոնադրության 31-36 կետերի դրույթները չեն տարածվում բաժնետոմսերի փոխանցման այն դեպքերի վրա, որոնք կատարվում են ժառանգության հիմքերով



- բաժնետոմսերն այլ անձանց անցնելու կանոններով՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժնով սահմանված ժառանգական իրավունքի կանոններով: Մեկից ավելի ժառանգների առկայության դեպքում, ժառանգության զանգվածի մեջ մտնող բաժնետոմսերը բաշխվում են նրանց միջև հավասարաչափ և համամասնորեն, եթե ժառանգների համաձայնությամբ բաշխման այլ համամասնություն որոշված չէ:
38. Բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի՝
- 1) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.
  - 2) մասնակցել Ընկերության կառավարմանը.
  - 3) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
  - 4) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը.
  - 5) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (գաղտնի փաստաթղթերից բացի), այդ թվում, Ընկերությանը դիմելուց հետո 5-օրյա ժամկետում ստանալ տեղեկություններ, որոնք վերաբերում են հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին և Ընկերության գործունեությանը.
  - 6) ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
  - 7) հանդես գալ առաջարկություններով ժողովում.
  - 8) ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
  - 9) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
  - 10) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը.
  - 11) ունենալ կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:
39. Արտոնյալ բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն օգտվում է 38 կետի 1), 2), 3), 4), 7) և 8) ենթակետերով սահմանված իրավունքներից՝ օրենքին և սույն կանոնադրության դրույթներին համապատասխան, իսկ 5), 6), 9), 10) և 11) ենթակետերով սահմանված իրավունքներից՝ սովորական բաժնետոմսերի սեփականատերերի հետ հավասար իրավունքներով:
40. Բաժնետերերը պարտավոր են չհրապարակել ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները:

## **VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴԵԿՎԱՐՆԵՐԸ**

41. Ընկերության կառավարման մարմիններն են՝
- 1) բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ ժողով կամ ընդհանուր ժողով).
  - 2) խորհուրդը.
  - 3) գործադիր մարմինը՝ գործադիր տնօրենը:
42. Ընկերությունը պարտավոր է ունենալ սույն կանոնադրության 41 կետով նախատեսված կառավարման մարմիններ, գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի ղեկավար, պատասխանատու ակտուար, ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ և համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ, բացառությամբ օրենքով և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում համապատասխան անձի հետ կնքված ապահովագրական գործառույթների

պատվիրակման պայմանագրի առկայության դեպքերի: Ընկերության կառավարման մարմինների անդամների, գլխավոր հաշվապահի, ներքին աուդիտի ղեկավարի, պատասխանատու ակտուարի, ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց պաշտոնները թափուր մնալու դեպքում Ընկերությունը պարտավոր է 90-օրյա ժամկետում օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով նշանակել կառավարման մարմինների անդամներ, գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի ղեկավար, պատասխանատու ակտուար, ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձանց:

43. **Ընդհանուր ժողովը Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:**

44. Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են՝

1) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, բացառությամբ կանոնադրական կապիտալի ավելացման դեպքերի, եթե դրա մասին որոշման ընդունումը կանոնադրությամբ վերապահված է խորհրդին.

2) Ընկերության վերակազմակերպումը.

3) Ընկերության լուծարումը.

4) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

5) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընդ որում, խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

6) խորհրդի ներկայացմամբ՝ Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

7) Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

8) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

9) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը.

10) խորհրդի անդամների վարձատրության կամ փոխհատուցման չափի սահմանումը.

11) օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը.

12) ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.

13) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը.

14) դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը.

15) հասարակական կազմակերպության հիմնադիր հանդես գալը.

16) հասարակական կազմակերպությանը մասնակցությունը.

17) օրենքով նախատեսված այլ հարցերով որոշումների ընդունումը:

45. Սույն կանոնադրության 44 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը

- վերապահվում է ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել կառավարման այլ մարմիններին կամ անձանց, բացառությամբ այդ կետի 10-րդ, 13-16-րդ ենթակետերում թվարկված հարցերի և Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման հարցի, որոնցով որոշումների ընդունումն ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է փոխանցվել խորհրդին: Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե << օրենքներով և սույն կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:
46. Բացի բաժնետերերի և այլ մասնակիցների համատեղ ներկայությամբ ժողովից, Ընդհանուր ժողովի որոշումները կարող են նաև ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, բացառությամբ սույն կանոնադրության 44 կետի 2-րդ, 3-րդ և 7-րդ կետերում նշված հարցերի: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:
  47. Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ժողովի որոշումներն ընդունվում են առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով ընկերության բաժնետերերի համատեղ ներկա լինելու: Հեռակա կարգով քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կապի՝ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը հավաստող և հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու փաստի հաստատման հնարավորություն տվող միջոցներով փոխանակելու եղանակով:
  48. Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են Ընկերության քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի կեսից ավելին տիրապետող բաժնետերերը:
  49. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» << օրենքի 79-րդ հոդվածի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ:
  50. Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) պետք է տրամադրվեն բաժնետերերին ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:
  51. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել նաև այնպիսի նիստով, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման ժողովը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված:
  52. Ընկերության ընդհանուր ժողովների գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքները իրականացնում է Ընկերության խորհուրդը: Ընկերության ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում Ընկերության խորհուրդը որոշում է՝

- 1) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, վայրը և ժամը.
  - 2) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի օրակարգը.
  - 3) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցելուն իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակի կազման տարին, ամիսը, ամսաթիվը.
  - 4) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի գումարման մասին Բաժնետերերին ծանուցելու կարգը.
  - 5) Բաժնետերերին Ընկերության ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը, քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:
53. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝
- 1) Ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև ձայնի իրավունք տվող մասնակցության անվանատերերը.
  - 2) Ընկերության արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով, ինչպես նաև այդ բաժնետոմսերի անվանատերերը՝ օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով.
  - 3) Ընկերության բաժնետեր չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.
  - 4) Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդներ.
  - 5) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում).
  - 6) պատասխանատու ակտուարը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում).
  - 7) Կենտրոնական բանկի լիազորած պաշտոնատար անձինք.
  - 8) Ընկերության խորհրդի որոշմամբ սահմանված այլ անձինք:
54. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի սահմանած տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
55. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող՝ Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը պետք է միաժամանակ բավարարի հետևյալ երկու պահանջները.
- ա) այն չպետք է նախորդի ընդհանուր ժողով գումարելու մասին որոշումը ընդունելու օրվան,
  - բ) ցուցակը կազմելու օրվա և ընդհանուր ժողովի անցկացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի կարող 45 օրից ավելի լինել:
56. Եթե ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 35 օր շուտ:
57. Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև ժողովում խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձինք ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց պատվիրված նամակով կամ էլեկտրոնային ձևով համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու կամ ծանուցումն առձեռն հանձնելու միջոցով: Ժողովի գումարման մասին

գրավոր ծանուցումը պետք է ուղարկվի կամ առձեռն հանձնվի ժողովի գումարման օրվանից առնվազն 5 օր առաջ, եթե օրենքով ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Ընկերությունն ընդհանուր ժողովի անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

58. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակը պետք է ժողովի անցկացումից առնվազն 10 օր առաջ տրամադրվի Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում:
59. Ընկերության բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:
60. **Ընկերության խորհուրդն** իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:
61. Ընկերության խորհուրդը կազմված է 5 անդամից, ինչպես նաև խորհրդի այն անդամներից, ովքեր օրենքի և սույն կանոնադրության համաձայն խորհրդի կազմում ընդգրկվել են առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության:
62. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ընդհանուր ժողովում Ընկերության ներկա բաժնետերերի կողմից, իսկ Ընկերության խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովում Ընկերության ներկա բաժնետերերի կողմից՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:
63. Ընդհանուր ժողովին Ընկերության խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի):
64. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:
65. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում, առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության, ընդգրկել իրենց ներկայացուցչին խորհրդի կազմում:  
Սույն կետի առաջին պարբերությամբ նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը խորհրդում հնարավոր է միայն Ընկերության բաժնետերերի խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում:
66. Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Ընկերության խորհրդի կազմում: Սույն կետի կիրառման առումով Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետեր է համարվում Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող այն բաժնետերերը, որը չի կնքել սույն կանոնադրության 65 կետում նշված պայմանագիրը:

67. Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կողմից և ընդգրկվի խորհրդի կազմում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության:
68. Ընկերության կանոնադրական կապիտալում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են միայն ընդհանուր ժողովի նիստին ներկա փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերը կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզ դրանց թիվը կազմի մեկ:
69. Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և տվյալ Ընկերության գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:
70. Ընկերությունը պարտավոր է խորհրդի սահմանած կարգով և պայմաններով վարձատրել կամ փոխհատուցել խորհրդի անդամներին՝ նրանց կատարած աշխատանքի կամ պաշտոնավարման համար:
71. Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանում է ընդհանուր ժողովը և չի կարող մեկ տարուց պակաս լինել:
72. Խորհրդի նախագահին ընտրում է խորհուրդը՝ խորհրդի անդամների կազմից:
73. Խորհրդի նախագահը՝
  - 1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.
  - 2) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը.
  - 3) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.
  - 4) նախագահում է Ընկերության ընդհանուր ժողովում.
  - 5) կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը:
74. Խորհրդի իրավասություններն են՝
  - 1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Ընկերության հեռանկարային զարգացման և գործարար ծրագրերի հաստատումը.
  - 2) ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.
  - 3) Ընկերության գործադիր մարմնի անդամների, պատասխանատու ակտուարի, ակտուարային ստորաբաժանման աշխատակիցների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
  - 4) Ընկերության ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Ընկերության ներքին աուդիտի ղեկավարի և անդամների նշանակումը, ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի ղեկավարի և անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
  - 5) Ընկերության տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.
  - 6) Ընկերության կազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը.
  - 7) Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը, եթե կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի որոշմամբ նրան տրված է այդպիսի լիազորություն.
  - 8) շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար

շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Ընկերության բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ Ընկերության տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

9) Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.

10) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելը, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

11) գործարար վարվելակերպի կանոնների սահմանումը.

12) Ընկերությունում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումներից բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը.

13) Ընկերության կողմից ապահովագրական գործունեության իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը.

14) Ընկերության տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Ընկերության ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառութային պարտականությունների բաշխումը.

15) օրենքով նախատեսված հարցերի ներկայացումն ընդհանուր ժողովի քննարկմանը.

16) Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

17) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

18) Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը.

19) Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և ներքին իրավական ակտերի սահմանումը.

20) Բաժնետիրոջ բաժնետոմսերի վաճառքի դեպքում Ընկերության կողմից վերջինիս նախապատվության իրավունքի շրջանակներում բաժնետոմսերը ձեռք բերելու կամ դրանից հրաժարվելու մասին որոշման կայացումը.

21) օրենքով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

75. Սույն կանոնադրության 74 կետում թվարկված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է խորհրդի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Ընկերության կառավարման այլ մարմիններին կամ այլ անձանց:

76. Առնվազն տարին մեկ խորհուրդն իր նիստում պետք է քննարկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը), ինչպես նաև քննարկի և անհրաժեշտության դեպքում վերանայի Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունն ու ներքին իրավական այլ ակտերը:

77. Առնվազն եռամսյակը մեկ խորհուրդը պետք է քննարկի Ընկերության ներքին աուդիտի ստորաբաժանման, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի, պատասխանատու ակտուարի (ակտուարային ստորաբաժանման ղեկավարի) հաշվետվությունները՝ իր սահմանած կարգով և ձևով:

78. Խորհուրդը պատասխանատու է Ընկերությունում ներքին հսկողության արդյունավետ համակարգ ապահովելու համար:
79. Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամի, Ընկերության գործադիր տնօրենի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի, Կենտրոնական բանկի, ինչպես նաև Ընկերության քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետիրոջ (բաժնետերերի) գրավոր պահանջով:
80. Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն եռամսյակը մեկ:
81. Ընկերության խորհրդի անդամների ծանուցումը նիստի գումարման մասին իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու կամ անձամբ դրանք հանձնելու կամ խորհրդի անդամների կողմից Ընկերությանը տրամադրված էլեկտրոնային փոստային հասցեով կամ հեռախոսով նրանց ծանուցելու միջոցով:
82. Ընկերության խորհրդի նիստի գումարման մասին Ընկերության խորհրդի անդամները ծանուցվում են նիստի գումարման օրվանից առնվազն հինգ օր առաջ:
83. Նիստի մասին գրավոր ծանուցումը պետք է պարունակի՝
- ա) Ընկերության ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը.
  - բ) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը (նիստի անցկացման ձևը, կապի միջոցը).
  - գ) նիստի օրակարգում ընդգրկված հարցերը.
  - դ) Ընկերության խորհրդի անդամների ծանոթանալու կարգը նիստում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին:
84. Ընկերության խորհրդի նիստերը գումարվում և անցկացվում է հետևյալ կերպ.
- ա) խորհրդի նիստի քարտուղարը խորհրդի նիստերի գումարման մասին պատշաճ տեղեկացնում է խորհրդի բոլոր անդամներին և Ընկերության գործադիր տնօրենին կամ նրա պարտականությունները կատարող անձին, ինչպես նաև խորհրդի նիստ գումարելու պահանջ ներկայացրած անձանց՝ նշելով խորհրդի նիստի գումարման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, ժամը, վայրը և խորհրդի օրակարգը.
  - բ) խորհրդի նիստի քարտուղարը խորհրդի նիստն սկսվելուց առնվազն 10 րոպե առաջ գրանցում է խորհրդի նիստին ներկայացած խորհրդի անդամներին և արդյունքների մասին հայտնում է խորհրդի նախագահին կամ նրա տեղակալին.
  - գ) խորհրդի նիստին քվորումն ապահովված լինելու և Ընկերության գործադիր տնօրենի կամ նրա պարտականությունները կատարող անձի ներկայության դեպքում սահմանված ժամին խորհրդի նախագահը, հայտարարում է խորհրդի նիստը բացված.
  - դ) խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, խորհրդի նիստին ներկա խորհրդի անդամներին, Ընկերության գործադիր տնօրենին կամ նրա պարտականությունները կատարող անձին և մասնակցող անձանց ծանոթացնում է խորհրդի օրակարգի ու դրանում ընդգրկված հարցերի քվեարկությունների ձևերի մասին.
  - ե) խորհրդի օրակարգում ընդգրկված յուրաքանչյուր հարցի շուրջ խորհրդի անդամները, Ընկերության գործադիր տնօրենը կամ նրա պարտականությունները կատարող անձը ու մասնակցող անձինք արտահայտվելու իրավունք ունեն.
  - զ) խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի շուրջ քննարկումներն ավարտվելուց հետո խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, հարցը դնում է քվեարկության.



է) խորհրդի նիստի քարտուղարը հաշվառում է ծայները և դրանք տրամադրում կամ քվեարկության արդյունքները հայտնում է խորհրդի նախագահին, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալին, որը հրապարակում է քվեարկության դրված հարցի շուրջ խորհրդի կողմից կայացված որոշումը:

ը) խորհրդի օրակարգում ընդգրկված հարցերի շուրջ որոշումներ կայացվելուց հետո, խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը, խորհրդի նիստին մասնակցած խորհրդի անդամներին տեղեկացնում է խորհրդի նիստի արձանագրությանը ծանոթանալու և ստորագրելու կարգին, որից հետո հայտարարում է խորհրդի նիստը փակված:

թ) խորհրդի քվորումի, Ընկերության գործադիր տնօրենի կամ նրա պարտականությունները կատարող անձի բացակայության դեպքում խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա տեղակալը հայտարարում է նոր խորհրդի նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը:

85. Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Խորհրդի իրավասությանը վերապահված բոլոր հարցերը կարող են լուծվել խորհրդի հեռակա նիստերի ժամանակ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

86. Իրական ժամանակի ռեժիմում խորհրդի նիստն անցկացնում է Ընկերության խորհրդի նախագահը կամ նրա տեղակալը (այսուհետ՝ նիստի նախագահող), երբ նիստի անցկացման տեղում ներկա են խորհրդի առնվազն երկու անդամներ: Իրական ժամանակի ռեժիմում խորհրդի նիստը անցկացվում է նիստի անցկացման տեղում տեղադրված հեռախոսի, հեռուստակապի կամ կապի այլ միջոցներով (այսուհետ՝ կապի միջոց), որոնցով խորհրդի նիստի անցկացման ժամանակ ապահովվում է խորհրդի նիստի բոլոր մասնակիցների հետ հաղորդակցվելու հնարավորությունը: Խորհրդի նիստի մասնակիցներ են համարվում նիստի նախագահողը, խորհրդի նիստի անցկացման տեղում ներկա գտնվող խորհրդի անդամը (անդամները), խորհրդի նիստի տեղում ներկա չգտնվող և կապի միջոցով խորհրդի նիստի մյուս մասնակիցների հետ հաղորդակցվելու հնարավորություն ունեցող խորհրդի անդամը (անդամներ) և (կամ) Ընկերության գործադիր տնօրենը կամ նրա պարտականությունները իրականացնող անձը, ինչպես նաև խորհրդի նիստին հրավիրված անձինք:

87. Խորհրդի նիստերն իրական ժամանակի ռեժիմում անցկացվում են հետևյալ կարգով.

ա) Նիստի նախագահողը կապի միջոցով կապ է հաստատում նիստի անցկացման տեղում չգտնվող խորհրդի նիստի մասնակցի հետ, վերջինիս (վերջիններիս) առաջադրելով ներկայացնել նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ իր (իրենց) դիրքորոշումը:

բ) Խորհրդի նիստի քարտուղարը, խորհրդի անդամի կամ Ընկերության գործադիր տնօրենի կամ նրա պարտականությունները իրականացնող անձի պահանջով արձանագրում է արտահայտված դիրքորոշումը (դիրքորոշումները), որոնք ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային կապի միջոցով ստորագրության (հաստատման) է (են) ներկայացվում խորհրդի նիստի անցկացման սենյակում չգտնվող դիրքորոշում հայտնած խորհրդի անդամին (անդամներին):

գ) Ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային կապի միջոցով ստացված գրավոր դիրքորոշումը

(դիրքորոշումները) խորհրդի անդամը (անդամները) ստորագրում (հաստատում) և ֆաքսիմիլային (էլեկտրոնային) կապի միջոցով հետ է (են) ուղարկում խորհրդի նիստի քարտուղարին: Միաժամանակ կապի միջոցով նիստի մասնակցի (մասնակիցների) արտահայտած դիրքորոշումը (դիրքորոշումները) ձայնագրվում (կամ տեսագրվում) և պահվում է (են)՝ մինչև խորհրդի նիստի արձանագրության ստորագրումը: Խորհրդի նիստի անցկացման տեղում չգտնվող խորհրդի անդամի (անդամների) կապի միջոցով արտահայտված դիրքորոշումը (դիրքորոշումները) հաշվի է (են) առնվում քվեարկության և ձայների հաշվառման ժամանակ:

88. Ընկերության խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով՝ սույն կանոնադրությամբ սահմանված հեռակա կարգով նիստերի գումարման և անցկացման կարգի համաձայն:

89. Խորհրդի նիստերն հեռակա կարգով գումարումն ու անցկացումը կատարվում է քվեաթերթիկների միջոցով: Հեռակա կարգով խորհրդի նիստ գումարելու և անցկացնելու դեպքում՝

ա) խորհրդի նիստերի քարտուղարը խորհրդի անդամներին էլեկտրոնային կամ ֆաքսիմիլ վերարտադրության միջոցով ուղարկում է խորհրդի օրակարգը, քվեաթերթիկները՝ հմապատասխան հարցով, քվեարկման տարբերակներով, տվյալ հարցի վերաբերյալ Ընկերության գործադիր տնօրենի կամ նրա պարտականությունները կատարող անձի գրավոր դիրքորոշումը.

բ) խորհրդի անդամները՝ ստանալով ուղարկված փաստաթղթերը և ծանոթանալով խորհրդի օրակարգին, 1 (մեկ) բանկային օրվա ընթացքում քվեաթերթիկների միջոցով քվեարկում են դրանում նշված հարցի շուրջ ու էլեկտրոնային կամ ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով այն ուղարկում են Ընկերության խորհրդի նիստի քարտուղարին.

գ) խորհրդի նիստի քարտուղարը ամփոփում է խորհրդի անդամների կողմից կատարված քվեարկության արդյունքները (հաշվառում է ձայները) և դրանց հիման վրա կազմում է խորհրդի նիստի հեռակա կարգով անցկացման արձանագրություն.

դ) հեռակա կարգով անցկացված Խորհրդի նիստի կազմված արձանագրությունը՝ քվեաթերթիկների հետ միասին էլեկտրոնային կամ ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով ուղարկում է խորհրդի անդամներին՝ ստորագրության.

ե) հեռակա կարգով անցկացված Խորհրդի նիստի ստորագրված արձանագրության հիման վրա խորհրդի նիստի քարտուղարը կազմում է խորհրդի համապատասխան որոշման նախագիծ և այն էլեկտրոնային կամ ֆաքսիմիլ վերարտադրության կապի միջոցով ուղարկում է խորհրդի նախագահին՝ ստորագրության համար, և այն ստորագրված վիճակում ստանալով՝ տրամադրում է Ընկերության գործադիր տնօրենին կամ նրա պարտականությունները կատարող անձին՝ որոշման պահանջների կատարումն ապահովելու համար:

զ) Քվեաթերթիկները վավեր են համարվում, եթե քվեաթերթիկում թողնվել է մեկ տարբերակ և այն ուղարկվել է քվեաթերթիկում նշված ժամկետում:

90. Ընկերության խորհրդի նիստերն իրավասու են (քվորում ունեն), եթե նիստին մասնակցում են խորհրդի առնվազն անդամների առնվազն կեսը: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, կամ սույն կանոնադրությամբ կամ ընդհանուր ժողովի հաստատած խորհրդի կանոնակարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:
91. Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:
92. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն գործադիր տնօրենի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Ընկերության գործադիր տնօրենի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների վերաբերյալ հարցերի: Գործադիր տնօրենը խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:
93. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝
  - 1) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
  - 2) նիստին մասնակցած անձինք.
  - 3) նիստի օրակարգը.
  - 4) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր խորհրդի անդամի.
  - 5) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.
  - 6) նիստում ընդունված որոշումները:
94. Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:
95. Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստում ընդունված որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:
96. Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Հանձնաժողովների իրավասությունները և գործունեության կարգը սահմանվում են խորհրդի որոշմամբ:
97. Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել խորհրդի անդամները և Ընկերության այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ:
98. Խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:
99. Ընդհանուր ժողովի կողմից խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն կամ եթե՝
  - 1) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
  - 2) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով օրենքի համաձայն նրան արգելվում է լինել Ընկերության ղեկավար.
  - 3) մեկ տարվա ընթացքում բացակայել է խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից

անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից.

4) օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.

5) մահացել է:

100. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված վարձատրությունը Ընկերության կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Ընկերությունն իրավունք ունի խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն կետի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված վարձատրությունը՝ դատարանում ապացուցելով խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման (չկատարման կամ ոչ պատշաճ կատարման) փաստը:

101. **Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է գործադիր տնօրենը:** Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ: Ընկերության գործադիր տնօրենը նշանակվում է խորհրդի կողմից, իսկ գործադիր տնօրենի տեղակալները՝ խորհրդի կողմից՝ գործադիր տնօրենի ներկայացմամբ:

102. Ընկերության գործադիր տնօրենը, որպես իր բացառիկ իրավասություն, ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում, Ընկերության անունից կնքում է գործարքներ, գործում է Ընկերության անունից առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր:

103. Ընկերության գործադիր տնօրենը՝

1) խորհրդի հաստատմանն է ներկայացնում խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, ինքնուրույն ստորաբաժանումների կանոնադրությունները, Ընկերության կազմակերպական կառուցվածքը.

2) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

3) աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

4) Ընկերության աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

5) ապահովում է ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումների կատարումը.

6) իրականացնում է Ընկերության կանոնադրությամբ, ինչպես նաև խորհրդի սահմանած իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

104. Այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ընդհանուր ժողովի, խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման կամ պատասխանատու ակտուարի իրավասությանը պատկանող, պատկանում են գործադիր տնօրենի իրավասությանը:

105. Գործադիր տնօրենը խորհրդին պարբերաբար, բայց ոչ պակաս, քան եռամսյակը մեկ, ներկայացնում է իր գործունեության վերաբերյալ հաշվետվություններ՝ խորհրդի սահմանած կարգով:

106. Գործադիր տնօրենի իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Ընկերության կառավարման այլ մարմիններին, ներքին

առդիտին, գլխավոր հաշվապահին, պատասխանատու ակտուարին կամ այլ անձի: Բացառությամբ սույն կետում սահմանված անձանց, գործադիր տնօրենի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես (իննսուն օրը չգերազանցող ժամկետով) կարող են փոխանցվել այլ անձի, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով Ընկերության գործադիր տնօրենի համար սահմանված մասնագիտական համապատասխանության և որակավորման չափանիշներին:

107. Խորհրդի կողմից գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝
  - 1) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
  - 2) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով օրենքի համաձայն նրան արգելվում է լինել Ընկերության գործադիր տնօրեն կամ այլ ղեկավար.
  - 3) օրինական ուժի մեջ մտած վճռով կամ դատավճռով զրկվել է ֆինանսական, բանկային, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից.
  - 4) մահացել է:
108. Գործադիր տնօրենի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Ընկերության կողմից նրան փոխհատուցելու պայմանով: Ընկերությունն իրավունք ունի գործադիր տնօրենի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու սույն կետի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով գործադիր տնօրենի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման (չկատարման կամ ոչ պատշաճ կատարման) փաստը:

## **VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱԿՏՈՒԱՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՏՈՎՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԸ**

109. **Ընկերության գլխավոր հաշվապահը** կամ նման պարտականություններ իրականացնող անձը (այսուհետ՝ գլխավոր հաշվապահ) իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:
110. Գլխավոր հաշվապահին նշանակում է խորհուրդը՝ գործադիր տնօրենի ներկայացմամբ:
111. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել որևէ այլ կառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի, բացառությամբ օրենքով սահմանված դեպքի:
112. Գլխավոր հաշվապահն առնվազն եռամսյակը մեկ խորհրդին և գործադիր տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:
113. Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան

հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և Ընկերության կանոնադրությանը համապատասխան: Սույն մասում նշված հաշվետվությունների պատրաստման, ներկայացման կամ հրապարակման համար գլխավոր հաշվապահի պատասխանատվությունը չի տարածվում Ընկերության պատասխանատու ակտուարի կողմից օրենքով սահմանված հաշվետվությունների պատրաստման, ներկայացման, հրապարակման վրա: Ընկերության այն հաշվետվությունները, որոնք պարունակում են տարբեր տեղեկատվություն, որի պատրաստման, ներկայացման կամ հրապարակման համար պատասխանատու են գլխավոր հաշվապահն ու պատասխանատու ակտուարը, ստորագրում են այդ երկու պաշտոնատար անձինք:

114. **Ներքին աուդիտի** ղեկավարին և անդամներին նշանակում է խորհուրդը: Ներքին աուդիտի ղեկավար և անդամ չեն կարող լինել Ընկերության կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարներ ու աշխատակիցներ, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների կամ գլխավոր հաշվապահի հետ փոխկապակցված անձինք:
115. Ներքին աուդիտը, խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝
  - 1) անկախ գնահատական է տալիս Ընկերության ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Ընկերության կառավարման համակարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ.
  - 2) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ:
116. Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:
117. Յուրաքանչյուր տարի խորհուրդը հաստատում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:
118. Տարեկան ծրագիրն առնվազն պետք է ներառի՝
  - 1) այն ոլորտները, որտեղ պետք է իրականացվի աուդիտորական ստուգում.
  - 2) առանձին ոլորտներում աուդիտորական դիտարկման բովանդակության նկարագրությունը:
119. Ներքին աուդիտի ղեկավարը խորհրդին (պատճենը՝ գործադիր մարմնին) է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝
  - 1) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին.
  - 2) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ: Ընդ որում, եթե խախտումները հետևանք են գործադիր մարմնի, գլխավոր հաշվապահի կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես խորհրդի նախագահին:
120. Ներքին աուդիտի ղեկավարի հաշվետվությունը պետք է առնվազն պարունակի հետևյալ տեղեկությունները՝
  - 1) աուդիտորական դիտարկման նկարագրությունը.
  - 2) դիտարկման արդյունքում բացահայտված խախտումներն ու թերությունները և դրանց վերացման վերաբերյալ առաջարկված միջոցառումները.
  - 3) հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման մասին ներքին

աուդիտի եզրակացությունը:

121. Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք ներկայացնել խորհրդին, իսկ պատճենը՝ Կենտրոնական բանկին: Ներքին աուդիտի կողմից սույն կետով նշված պարտականությունների կատարումը չի կարող վերջինիս համար որևէ բացասական հետևանք կամ պարտավորություն առաջացնել:
122. Ընկերությունում վերստուգիչ հանձնաժողով չի ստեղծվում:
123. **Ընկերության պատասխանատու ակտուարին** նշանակում է խորհուրդը:
124. Ընկերության պատասխանատու ակտուարը՝
  - 1) ստուգում է ապահովագրավճարների հաշվարկման և տեխնիկական պահուստների ձևավորման համապատասխանությունը օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին.
  - 2) պարզում է, թե ապահովում է արդյոք ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը հաշվարկված ապահովագրավճարներով և ձևավորված պահուստներով.
  - 3) հաշվարկում է ապահովագրական սակագները, ապահովագրավճարները, ինչպես նաև ապահովագրական, կենսաթոշակի և անուիտի գումարները.
  - 4) հավաստում է Ընկերության կողմից «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան պահանջների պահպանումը.
  - 5) պատրաստում, ներկայացնում կամ հրապարակում է օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այն հաշվետվությունները, որոնք ունեն հետևյալ բովանդակությունը՝
    - ա. տեխնիկական պահուստների հաշվարկման սկզբունքներն արտացոլող հաշվետվություն,
    - բ. Ընկերության պահուստների, պահուստներին համարժեք ակտիվների և ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների համարժեքությունն արտացոլող հաշվետվություն,
    - գ. ապահովագրավճարների (ապահովագրական սակագների) բավարար լինելն արտացոլող հաշվետվություն,
    - դ. օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված Ընկերության տնտեսական նորմատիվների փաստացի մեծությունն արտացոլող հաշվետվություն:
125. Գործադիր մարմինը պարտավոր է պատասխանատու ակտուարին տրամադրել իր լիազորություններն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկություններ:
126. Պատասխանատու ակտուարը պարտավոր է եռամսյակը մեկ խորհրդին ներկայացնել հաշվետվություն:
127. Եթե պատասխանատու ակտուարը (ակտուարային ստորաբաժանման ղեկավարը) իր լիազորություններն իրականացնելիս բացահայտել է, որ ապահովագրավճարները չեն հաշվարկվել, իսկ տեխնիկական պահուստները չեն ձևավորվել օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, և դրա արդյունքում ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը դրվել է վտանգի տակ, ապա պատասխանատու ակտուարն այդ մասին պետք է անհապաղ, բայց ոչ ավելի, քան հինգ օրվա ընթացքում գրավոր տեղեկացնի խորհրդին, գործադիր մարմնին և Կենտրոնական բանկին: Պատասխանատու ակտուարի կողմից սույն կետով նշված պարտականությունների կատարումը չի կարող վերջինիս համար որևէ բացասական հետևանք կամ պարտավորություն առաջացնել:

**128. Ընկերության ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝**

ա) բացահայտում, գնահատում է Ընկերության գործունեությանը բնորոշ ռիսկերը, տալիս է Ընկերության ռիսկի ընդհանուր նկարագիրը.

բ) հսկողություն և մոնիտորինգ է իրականացնում բացահայտված ռիսկերի նկատմամբ, ապահովում է դրանց արդյունավետ կառավարումը.

գ) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ընդունելի սահմանաչափը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները, խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ խորհուրդ և գործադիր մարմին հաշվետվություն է ներկայացնում Ընկերության ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ.

դ) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ռիսկերի կառավարմանն առնչվող այլ գործառույթներ:

**129. Ընկերության համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝**

ա) ապահովում է Ընկերության և Ընկերության աշխատակիցների գործունեության համապատասխանությունը օրենքների, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին.

բ) ապահովում է Ընկերությունում պատասխանատու վարվելակերպի ձևավորումն ու պահպանումը.

գ) գնահատում է Ընկերության գործունեության վրա օրենքների և այլ իրավական ակտերի հնարավոր փոփոխությունների ազդեցությունը և դրա հետ կապված հնարավոր ռիսկերը.

դ) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված համապատասխանության ապահովմանն առնչվող այլ գործառույթներ:

**VIII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱՔԱԺԻՆՆԵՐԸ**

130. Ընկերությունն իրավունք ունի օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով որոշում կայացնել Ընկերության կուտակված շահույթը Ընկերությանը թողնելու կամ այն բաժնետերերի միջև բաշխելու մասին՝ միջանկյալ կամ տարեկան շահութաբաժինների տեսքով:

131. Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին, եթե առկա են օրենքով սահմանված հանգամանքները:

132. Ընկերությունը պարտավոր է վճարել շահութաբաժիններ, եթե որոշում է ընդունել (հայտարարել է) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելու մասին: Շահութաբաժինները վճարվում են Հայաստանի Հանրապետության դրամով: Ընկերության հասարակ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները վճարվում են Ընկերության շահույթից:

133. Բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի մասին որոշումը ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի մասին որոշումը ընդունվում է Ընկերության խորհրդի կողմից:



134. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից: Տարեկան և միջանկյալ շահութաբաժինները վճարվում են շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում:

**IX. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ: ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ**

- 135. Ընկերության կորուստները (վնասները) ծածկելու, ինչպես նաև Ընկերության կողմից թողարկած պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ փաստացի համալրված կանոնադրական կապիտալի 15%-ի չափով:
- 136. Պահուստային հիմնադրամը օգտագործվում է Ընկերության Խորհրդի որոշմամբ՝ Ընկերության շահույթի և այլ միջոցների չբավարարման դեպքում, և այլ նպատակների համար՝ որոնք նշված չեն սույն կետում, օգտագործման ենթակա չէ:
- 137. Պահուստային հիմնադրամը ձևավորվում և հատկացումները կատարվում են Ընկերության զուտ շահույթից, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից՝ մինչև սահմանված չափերին հասնելը: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է սույն կանոնադրության 135 կետով սահմանված չափից փոքր մեծություն, ապա մասհանումներն այդ հիմնադրամին կատարվում են Ընկերության զուտ շահույթի առնվազն 5%-ի չափով:
- 138. Օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, ինչպես նաև Ընկերության Ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող են ստեղծվել այլ հիմնադրամներ:
- 139. Ընկերության հիմնադրամներին հատկացումների ու դրանց օգտագործման չափն ու կարգը որոշվում է Ընկերության խորհրդի կողմից:

**X. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՏԵՂԾՄԱՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 140. Ընկերությունն իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով Հայաստանի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս ստեղծել առանձնացված տարածքային ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր, ներկայացուցչություններ:
- 141. Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների հիմնադրման և նրանց գործունեության դադարեցման մասին որոշումները կայացնում է Ընկերության խորհուրդը՝ ձայների պարզ մեծամասնությամբ:
- 142. Ընկերության մասնաճյուղը Ընկերության՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Ընկերության գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանում է, որը գործում է Ընկերության կողմից տրված լիազորությունների սահմաններում և նրա անունից ապահովագրական գործունեություն է իրականացնում:
- 143. Ընկերության ներկայացուցչությունը Ընկերության՝ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող և Ընկերության գտնվելու վայրից դուրս գտնվող առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Ընկերությունը, ուսումնասիրում է ֆինանսական շուկան, Ընկերության անունից կնքում է

պայմանագրեր, իրականացնում է համանման այլ գործառնություններ:

144. Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները համարվում են հիմնադրված և իրավունք ունեն իրականացնել իրենց վերապահված գործառնությունները, միայն Կենտրոնական բանկում գրանցվելու պահից:
145. Ընկերության մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները գործում են Ընկերության խորհրդի կողմից հաստատած կանոնադրությունների հիման վրա:
146. Մասնաճյուղի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Ընկերության գործադիր տնօրենը: Մասնաճյուղի գործունեության ընթացիկ ղեկավարումն իրականացնում է մասնաճյուղի տնօրենը, որը ապահովում է մասնաճյուղում Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հանձնարարականների և այլ ներքին իրավական ակտերի կատարումը, իրականացնում սույն կանոնադրությամբ, Ընկերության կառավարման մարմինների սահմանած իրավական ակտերի շրջանակներում նախատեսված մասնաճյուղի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:
147. Մասնաճյուղի տնօրենը նշանակվում (հաստատվում) է պաշտոնի և ազատվում է պաշտոնից Ընկերության գործադիր տնօրենի հրամանով: Ընկերության մասնաճյուղի տնօրենի որակավորմանը ներկայացվող պահանջները կամ աշխատանքային գործառնությունները, նրա վարձատրության պայմաններն ու չափը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքերը, պայմանագրի գործողության ժամկետներն ու այլ պայմանները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ և (կամ) Ընկերության ու մասնաճյուղի տնօրենի միջև կնքված աշխատանքային պայմանագրով:
148. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գույքը հաշվառվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Ընկերության հաշվեկշռում:
149. Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության համար պատասխանատվությունը կրում է Ընկերությունը:
150. Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության դադարեցման (ներառյալ՝ ժամանակավոր դադարեցման) կարգը և պայմանները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Կենտրոնական բանկը կարող է թույլ չտալ դադարեցնել կամ ժամանակավորապես դադարեցնել մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեությունը՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում և պայմաններով:

## **XI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ**

151. Ընկերությունը պարտավոր է մշտապես ունենալ գործող ինտերնետային կայք:
152. Ընկերությունը պարտավոր է իր ինտերնետային կայքում հրապարակել՝
  - 1) ֆինանսական հաշվետվությունները (առնվազն վերջին տարեկան և վերջին եռամսյակային) և հաշվետվությունների վերաբերյալ արտաքին աուդիտի եզրակացության պատճենը: Ընդ որում, Ընկերությունը պարտավոր է սույն կետում նշված ֆինանսական հաշվետվությունները հրապարակել նաև մամուլում.
  - 2) տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը: Ընդ որում, Ընկերությունը պարտավոր է տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակել նաև մամուլում.
  - 3) շահութաբաժիններ վճարելու մասին որոշումների պատճենները, ինչպես նաև Ընկերության շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերի պատճենները՝ դրանց առկայության դեպքում.

4) Ընկերությունում նշանակալից մասնակցություն ունեցող բաժնեդերերի մասին տեղեկատվություն՝ նրանց անունը (անվանումը), Ընկերությունում նրանց ունեցած մասնակցության չափը (բացառությամբ այն անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձանց, որոնք չունեն Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակցություն), նրանց մասին օրենքով սահմանված այլ տեղեկություններ.

5) Խորհրդի, գործադիր մարմնի անդամների ցանկը և անձնական տվյալները (անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը), Ընկերության ղեկավարների մասին օրենքով սահմանված այլ տեղեկություններ.

6) օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված հաճախականությամբ և կարգով օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ, բացառությամբ առևտրային, ապահովագրական կամ այլ գաղտնիք կազմող տեղեկությունների.

153. Ընկերությունը պարտավոր է իր ինտերնետային կայքում և առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Ընկերության գլխամասային գրասենյակում, Ընկերության մասնաճյուղերում և ներկայացուցչություններում) հրապարակել օրական կտրվածքով թարմացված տեղեկություններ՝ իր կողմից առաջարկվող ապահովագրական ծառայությունների վերաբերյալ՝ ըստ ապահովագրության տեսակների, դասերի և ենթադասերի, այդ թվում՝ ապահովագրության պայմանները և առաջարկվող ապահովագրական սակագները:

154. Ընկերությունը պարտավոր է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 120-օրյա ժամկետում, մամուլում հրապարակել աուդիտորական եզրակացությունը, տարեկան ֆինանսական հաշվետվությունը, իսկ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը հրապարակել իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունը: Ընկերությունը պարտավոր է ֆինանսական հաշվետվությունները հրապարակել նաև առանձին գրքույկի կամ հասարակության համար հասանելի այլ ձևով (Ընկերության գլխամասային գրասենյակում, Ընկերության մասնաճյուղերում և ներկայացուցչություններում):

155. Ընկերությունը պարտավոր է նաև ցանկացած անձի պահանջով նրան տրամադրել՝

1) Ընկերության պետական գրանցման վկայականի և Ընկերության կանոնադրության պատճենները.

2) Ընկերության թողարկած պարտատոմսերի և այլ արժեթղթերի, ինչպես նաև Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարգավորվող ածանցյալ ֆինանսական գործիքների հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ արժեթղթերի շուկան կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկությունները.

3) օրենքով նախատեսված տեղեկությունները (փաստաթղթերի պատճենները):

156. Օրենքով սահմանված համապատասխան տեղեկությունների (փաստաթղթերի պատճենների) տրամադրման համար գանձվող վճարը չի կարող ավելի լինել դրանց պատրաստման և (կամ) փոստային առաքման համար արված փաստացի ծախսերից:

157. Ընկերությունը պարտավոր է իր գլխամասային գրասենյակում, Ընկերության մասնաճյուղերում և ներկայացուցչություններում տեսանելի վայրում, օրենքով սահմանված համապատասխան տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի և ժամանակի մասին փակցնել հայտարարություն:

158. Ընկերությունն իրավունք չունի իր գովազդներում, հրապարակային օֆերտայում կամ իր անունից արված որևէ հայտարարության մեջ օգտագործելու ապակողմնորոշող

այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից Ընկերության վերաբերյալ կատարված հայտարարություններ, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ Ընկերության ֆինանսական վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ:

159. Ընկերության կողմից հրապարակվող կամ տրամադրվող տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:

## **XII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

160. Յուրաքանչյուր տարի Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ նաև արտաքին աուդիտ)՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:
161. Ընկերությունը համապատասխան արտաքին աուդիտին ընտրում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված աուդիտորական կազմակերպությունների ընտրությանը ներկայացվող չափանիշներին համապատասխան:
162. Ընկերության արտաքին աուդիտին հաստատում է Ընկերության ժողովը՝ խորհրդի ներկայացմամբ: Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափը սահմանում է խորհուրդը: Ընկերության անունից արտաքին աուդիտի հետ համապատասխան պայմանագիրը կնքում է խորհրդի նախագահը:
163. Ընկերության աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել խորհրդի կողմից՝ Ընկերության միջոցների հաշվին:
164. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման արտաքին աուդիտն իրականացնող անձի կողմից կարող է իրականացվել նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր հանդիսացող մասնակիցների պահանջով: Այդ դեպքում աուդիտն իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են աուդիտ պահանջող մասնակիցները: Ընդ որում, սույն կետում նշված անձինք կարող են Ընկերությունից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, և Ընկերությունը պարտավոր է հատուցել դրանք, եթե այդ աուդիտն ընդհանուր ժողովի կամ խորհրդի որոշմամբ արդարացված է եղել Ընկերության համար:
165. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացություն կազմելու պարտավորության ամրագրումից, պետք է նախատեսի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ Ընկերության ղեկավարության) կազմում:
166. Կենտրոնական բանկը կարող է Ընկերությանը պարտադրել չորս ամսվա ընթացքում հրավիրել աուդիտն իրականացնող անձի և <http://www.azdarar.am> հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել Ընկերության ֆինանսական հաշվետվությունները և աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը:
167. Աուդիտորի եզրակացությունը և հաշվետվությունն Ընկերությունը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի մինչև տվյալ ֆինանսական տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ը:

168. Կենտրոնական բանկի պահանջով աուդիտն իրականացնող անձը պարտավոր է Կենտրոնական բանկ ներկայացնել Ընկերության աուդիտի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, նույնիսկ եթե դրանք առևտրային, բանկային, ապահովագրական կամ այլ գաղտնիք կազմեն: Սույն մասով սահմանված պարտավորությունների չկատարման համար աուդիտն իրականացնող անձը կրում է օրենքով սահմանված պատասխանատվություն:
169. Ընկերության աուդիտն իրականացնող անձը եզրակացություն է ներկայացնում նաև՝
- ա) Ընկերության տեխնիկական պահուստների համարժեքության մասին.
  - բ) օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ Ընկերության տնտեսական նորմատիվների պահանջներին համապատասխանության մասին.
  - գ) Ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների տեղաբաշխման՝ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.
  - դ) Ընկերության ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգի՝ օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխանության մասին.
  - ե) Ընկերության ներքին տեղեկատվական համակարգի առկայության կամ որակի մասին.
  - զ) Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ամբողջականության ու հավաստիության մասին:
170. Կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի համատեղ նորմատիվ իրավական ակտերով կարող են աուդիտն իրականացնող անձի համար սահմանվել աուդիտին և աուդիտորական եզրակացության ձևին և բովանդակությանը վերաբերող առավել մանրամասն պահանջներ:
171. Կենտրոնական բանկը կարող է պահանջել աուդիտն իրականացնող անձին տալ լրացուցիչ բացատրություններ և պարզաբանումներ՝ իր եզրակացության և հաշվետվության վերաբերյալ:
172. Եթե աուդիտորական եզրակացությունը և (կամ) հաշվետվությունը կազմվել են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված պահանջների խախտմամբ, կամ աուդիտը չի իրականացվել օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, ապա Կենտրոնական բանկը կարող է չընդունել այն և պահանջել Ընկերության հաշվին աուդիտ իրականացնող այլ անձի կողմից նոր աուդիտ:

### **XIII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ**

173. Ընկերությունը լուծարվում է՝
- ա) Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ (ինքնալուծարում).
  - բ) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում.
  - գ) Ընկերության սնանկության դեպքում:
174. Ընկերության ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու Ընկերության լուծարման մասին, եթե Ընկերությունը փոխանցել է իր ապահովագրական պորտֆելն ամբողջությամբ, կատարել է ապահովագրության պայմանագրերից բխող բոլոր պարտավորությունները և ունի բավարար միջոցներ բոլոր այլ պարտատերերի պահանջները բավարարելու համար:

175. Ընդհանուր ժողովի կողմից Ընկերության լուծարման նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկին դիմելու մասին որոշման կայացման համար խորհուրդն ընդհանուր ժողով է ներկայացնում Ընկերության ընթացիկ տարվա ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, ինչպես նաև պարտատերերի պահանջների բավարարմանն ուղղված միջոցների առկայությունը հավաստող և պարտատերերի պահանջների բավարարման համար անհրաժեշտ ժամկետները նախատեսող տեղեկանք:
176. Ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության լուծարման նպատակով ընդհանուր ժողովի կողմից նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկին դիմելու մասին որոշման հիման վրա Ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում Ընկերության լուծարման նախնական համաձայնություն ստանալու դիմում՝ կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր և տեղեկություններ, որոնց ցանկը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:
177. Կենտրոնական բանկի խորհրդի կողմից Ընկերությանը լուծարման նախնական համաձայնություն տալու դեպքում Ընկերությունը միջոցներ է ձեռնարկում իր ապահովագրական պորտֆելն ամբողջությամբ փոխանցելու և ապահովագրական գործունեությունից բխող իր բոլոր պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու ուղղությամբ:
178. Ապահովագրական պորտֆելն ամբողջությամբ փոխանցելուց և ապահովագրական գործունեությունից բխող իր բոլոր պարտավորությունները պատշաճ կերպով կատարելուց հետո միայն ընդհանուր ժողովը կարող է լուծարման մասին որոշում ընդունել:
179. Լուծարման մասին որոշման ընդունումից հետո Ընկերությունը եռօրյա ժամկետում Կենտրոնական բանկ է ներկայացնում լուծարման թույլտվություն ստանալու դիմում՝ կցելով լուծարումը հիմնավորող փաստաթղթեր և տեղեկություններ, որոնց ցանկը սահմանվում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:
180. Ընկերության լուծարային հանձնաժողովը ստեղծվում է Ընկերության լուծարման թույլտվությունը տալու մասին Կենտրոնական բանկի խորհրդի որոշման կայացումից հետո՝ հնգօրյա ժամկետում:
181. Լուծարային հանձնաժողովն ստեղծվում է Ընկերությունը լուծարելու, նրա գույքը (միջոցները) վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով:
182. Լուծարային հանձնաժողովը կազմվում է առնվազն երեք անդամից: Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված համապատասխան որակավորում ունեցող անձինք:
183. Մինչև լուծարային հանձնաժողովի ձևավորումը լուծարային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է տվյալ Ընկերության գործադիր տնօրենը:
184. Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում Ընկերության կառավարման լիազորությունները:
185. Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից՝ հնգօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը հայտարարություն է տալիս առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում և ծանուցում է Կենտրոնական բանկին Ընկերության լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի ու ժամկետների մասին, որը չի կարող պակաս լինել 60 օրից:
186. Լուծարային հանձնաժողովը չստեղծվելու դեպքում Ընկերության լուծարային հանձնաժողովն ստեղծվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

187. Ընկերության կառավարման մարմինները պարտավոր են լուծարային հանձնաժողով ստեղծվելու պահից՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողով հանձնել Ընկերության կնիքը, դրոշմակնիքները, կապարակնիքը, ձևաթղթերը, փաստաթղթերը, նյութական և այլ արժեքներ:
188. Լուծարային հանձնաժողով ստեղծվելու պահից՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովի նախագահը դիմում է պետական լիազորված մարմին՝ Ընկերության ֆիրմային անվանման մեջ ներառելու «լուծարվող ապահովագրական ընկերություն» բառերը: Պետական լիազորված մարմինը դիմումն ստանալու պահից եռօրյա ժամկետում լուծարվող Ընկերության ֆիրմային անվանման մեջ կատարում է փոփոխություն՝ ներառելով «լուծարվող ապահովագրական ընկերություն» բառերը:
189. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է սահմանված կարգով լուծարվող Ընկերության ֆիրմային անվանման մեջ փոփոխություն կատարելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, փոխել լուծարվող Ընկերության կնիքը, դրոշմակնիքը, կապարակնիքը, ձևաթղթերը՝ ներառելով «լուծարվող ապահովագրական ընկերություն» բառերը:
190. Լուծարային հանձնաժողովը մինչև պարտատերերի պահանջների բավարարումը սկսելը իրականացնում է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործողությունները:
191. Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ 7-օրյա ժամկետում, կազմում, հաստատում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում հրապարակում է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը, որը պարունակում է տեղեկություններ՝
- ա) Ընկերության գույքի կազմի մասին.
  - բ) պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի մասին, այդ թվում՝ Ընկերության հաշվեկշռում արտացոլված կամ Ընկերությանը ներկայացված պահանջների ընդհանուր գումարը, յուրաքանչյուր պարտատիրոջը հասանելիք գումարի չափը և սույն օրենքով սահմանված պահանջների բավարարման հերթականությունը, ինչպես նաև իր կողմից մերժված պահանջների առանձին ցանկը.
  - գ) պարտատերերի ներկայացրած պահանջների քննարկման արդյունքների մասին.
  - դ) Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ տեղեկություններ:
192. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը հրապարակած թերթի մեկ օրինակը հրապարակման օրը ներկայացնել Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկն իրավունք ունի պարտադրելու լուծարային հանձնաժողովին միջանկյալ լուծարային հաշվեկշիռը հրապարակել առնվազն 2000 տպաքանակ ունեցող այլ հանրապետական մամուլում:
193. Լուծարային հանձնաժողովը Ընկերության պարտավորությունները մարում է լուծարային միջոցների հաշվին, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված հերթականությամբ և կարգով, միջանկյալ լուծարային հաշվեկշիռն համապատասխան՝ սկսած դրա հրապարակման օրվանից:
194. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, ձևով, հաճախականությամբ և ժամկետներում հաշվետվություններ ներկայացնել Կենտրոնական բանկ:
195. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ցանկով և ձևով իր գործունեության վերաբերյալ առնվազն ամիսը մեկ տեղեկություններ հրապարակել առնվազն 2000 տպաքանակ ունեցող

հանրապետական մամուլում:

196. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարային հաշվեկշիռը և այն լուծարվող ընկերության ընդհանուր ժողովի կողմից դրա հաստատվելու պահից եռօրյա ժամկետում ներկայացնում է Կենտրոնական բանկ:
197. Կենտրոնական բանկի կողմից լուծարային հաշվեկշիռը չհաստատելու դեպքում լուծարային հանձնաժողովը տասնօրյա ժամկետում վերացնում է Կենտրոնական բանկի կողմից լուծարային հաշվեկշռի հաստատումը մերժելու հիմքերը, և լուծարային հաշվեկշիռը լուծարվող ընկերության ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո այն հաստատելու մասին նոր դիմում է ներկայացնում Կենտրոնական բանկ:
198. Կենտրոնական բանկի կողմից լուծարային հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից եռօրյա ժամկետում լուծարային հանձնաժողովը ընկերության լուծարման վերաբերյալ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով հրապարակում է տեղեկատվություն, որից հետո լուծարային հանձնաժողովն ազատվում է ընկերության լուծարման հետ կապված պարտավորություններից:
199. Լուծարային հանձնաժողովի անդամի վարձատրությունը կատարվում է լուծարվող ընկերության գույքի հաշվին:

#### **XIV. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ**

200. Սույն կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ կարող է կատարել ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:
201. ՀՀ օրենսդրության փոփոխության դեպքում, մինչև համապատասխան փոփոխությունների կատարումը, սույն կանոնադրությունը գործում է այնքանով, որքանով չի հակասում սույլալ պահին գործող օրենսդրությանը: